

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

29 մարտի 2012 թվականի N 417-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ  
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 1789-Ն ԵՎ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 1919-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*:

1. Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին 2012 թվականին հատկացնել 256,762.3 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 և 10 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության մարզպետներին՝ սույն որոշման NN 1-10 հավելվածներում նշված աշխատանքներին համապատասխան, անհրաժեշտության դեպքում, կատարել դրանցից բխող փոփոխություններ կնքված պայմանագրերում և նախահաշիվներում:

3. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշման NN 11 և 12 հավելվածներում կատարել լրացումներ՝ համաձայն NN 11 և 12 հավելվածների:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի N 108-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու և թույլտվություն տալու մասին» N 1789-Ն որոշման 2-րդ կետը «դրանցով նախատեսված» բառերից հետո լրացնել «ապրանքների մատակարարման, գույքի ձեռքբերման,» բառերով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի  
Հանրապետության  
վարչապետ**

**S. Սարգսյան**

2012 թ. ապրիլի 13  
Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ  
 ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ**

(հազ. դրամ)

NN ը/կ	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների և աշխատանքների անվանումները	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>37,882.6</b>	<b>37,882.6</b>	<b>37,882.6</b>
	<b>այդ թվում՝</b>			
<b>1.</b>	<b>Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում</b>	<b>19,500.0</b>	<b>19,500.0</b>	<b>19,500.0</b>
	<b>որից՝</b>			
1.1.	Միսիանի Կամոյի փողոցի վերանորոգում	15,500.0	15,500.0	15,500.0
1.2.	«Միսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական մասնաշենքի վերանորոգում	3,000.0	3,000.0	3,000.0
1.3.	գ. Հարթաշենի մանկապարտեզի նորոգում	1,000.0	1,000.0	1,000.0
<b>2.</b>	<b>Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին</b>	<b>14,663.0</b>	<b>14,663.0</b>	<b>14,663.0</b>
	<b>որից՝</b>			
2.1.	Ույծ համայնքի նախորդ տարիներից առաջացած աշխատավարձի և սոցիալական ապահովագրության վճարների պարտքերի մարման նպատակով գումարի հատկացում	14,663.0	14,663.0	14,663.0
<b>3.</b>	<b>Նախագծահետազոտական ծախսեր</b>	<b>3,719.6</b>	<b>3,719.6</b>	<b>3,719.6</b>

Հայաստանի Հանրապետության  
 կառավարության աշխատակազմի  
 ղեկավար

Դ. Սարգսյան